

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի, 2020 N 58

ՏՆՏԵՍՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակիցների կողմից 2020 թվականի օգոստոսի 21-ին իրականացված մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրությունը՝ **ո ղ ո շ ու մ ե մ**.

1. 72 ժամով արգելել «Նինա Շահվերդյան» ԱԶ (ՀՎՀՀ 90496478) Ստեփանակերտ քաղաքի Վ.Սարգսյանի 16/38 հասցեում տեղակայված հանրային սննդի օբյեկտի գործունեության ծավալումը:

2. ԱՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ ապահովել տնտեսվարողին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունն արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Թ. ԻՐԻՉՅԱՆ